Համարը	N 1936-Ն	*Տեսակը*	Մայր
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 07.03.07./14(538) Հոդ.297	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	21.12.2006
Ստորագրող մարմինը	ՀՀ Վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	16.02.2007
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	*Վավերացման ամսաթիվը*	22.02.2007
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	17.03.2007	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏԻ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
22 փետրվարի 2007 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 դեկտեմբերի 2006 թվականի N 1936-Ն

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏԻ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազգային պահուստի արժեքների փորձաքննության անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2007 թ. փետրվարի 16
Երևան

Հավելված

ՀՀ կառավարության 2006 թվականի
դեկտեմբերի 21-ի N 1936-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏԻ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ազգային պահուստի (այսուհետ՝ ազգային պահուստ) արժեքների փորձաքննության (այսուհետ՝ փորձաքննություն) անցկացման հետ կապված հարաբերությունները:

2. Փորձաքննությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալությունը՝ 7 անդամից ոչ պակաս փորձագիտական հանձնաժողովի միջոցով՝ ներգրավելով իրավասու պետական մարմինների և այլ մասնագետներ:

Փորձագիտական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը:

3. «Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի պետական գանձարան» գործակալության պետը փորձագիտական հանձնաժողովի նախագահն է, որը կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները:

4. Փորձագիտական հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կարգով, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերով:

5. Թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված պատմամշակութային, թանգարանային, գիտական և գեղարվեստական նշանակություն ունեցող հազվագյուտ ոսկերչական և այլ կենցաղային իրերի ու կրոնական պաշտամունքի առարկաների փորձաքննությունն իրականացվում է իրերի տեսակների և անվանումների որոշման, թանկարժեք մետաղների տեսակի և կազմի, դրանց քաշի, իսկ իրերում թանկարժեք և այլ գունավոր քարերի առկայության դեպքում դրանց տեսակի, գույնի, քաշի և այլ բնութագրիչների միջոցով՝ հաշվի առնելով մետաղափորձական վերահսկողության տեսչության փորձաքննության արձանագրության նախնական տվյալները:

Հանձնաժողովի կողմից հաստատվում են իրերի նկարագրերը, որոնք համապատասխանում են պատմամշակութային, թանգարանային, գիտական, գեղարվեստական նշանակություն ունեցող, կրոնական պաշտամունքի առարկաներին ներկայացվող պահանջներին:

6. Ազգային պահուստ հաշվեգրվող արժեքների որակական հատկանիշների փորձաքննության հետ միաժամանակ իրականացվում է դրանց գնահատումը գործող շուկայական գներին համապատասխան, որը չի կարող պակաս լինել համաշխարհային շուկայի (համաշխարհային ճանաչում ունեցող աճուրդային կենտրոնների) գներից:

7. Փորձագիտական հանձնաժողովի փորձագիտական եզրակացությունը՝ համաձայն ձևի, տրվում է՝ յուրաքանչյուր իրի վերաբերյալ իր կողմից անցկացված փորձաքննության արդյունքների հիման վրա:

8. Ազգային պահուստում արժեքները հանձնելիս՝ դրանց տեղափոխման, փորձաքննության, որակի բնութագրման ու գնահատման ծախսեր առաջանալու դեպքում դրանք կատարվում են պայմանագրային հիմունքներով:

9. Փորձագիտական հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին Հայաստանի

Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում ամենամյա հաշվետվություն:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավ

_____
(պատվիրատուի անվանումը)

կողմից ներկայացված իրերի փորձաքննության

ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏԻ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Պատվիրատուի կողմից փորձաքննության են ներկայացվել հետևյալ իրերը՝
_____
_____
_____

2. Փորձաքննությունն անցկացվել է _____
_____

(իրավական ակտերի անվանումները)

_____
_____
_____

պահանջներին համապատասխան:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

_____
_____
_____
_____
_____
_____

Փորձագետներ

_____	_____	_____
(փորձագետի պաշտոնը)	(ստորագրությունը)	(անունը, ազգանունը)